ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 60 ՏԱՐԻՆ

2003 թ. հուլիսի 11-ից 15-ը տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հիմնադրման 60 ամյակին նվիրված հանդիսությունները:

Հոբելյանական հանդիսությունների շարքը սկսվեց հուլիսի 11-ին ինստիտուտի հրատարակած գրքերի ցուցահանդեսի, գիտավարչական մասի, համակարգչային բաժնի և նիստերի դահլիճի բացման արարողություններով:

Հանդիսավոր նիստը բացեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Մելքոնյանը: Նա անդրադարձավ Պատմության ինստիտուտի անցած 60-տմյա ուղուն, ընդգծեց, որ 1943թ. նոյեմբերին Հայրենական մեծ պատերազմի դժվարին օրերին Հայաստանի ԳԱ հիմնումը և Պատմության ինստիտուտի ստեղծումը հայ ժողովրդի կյանքում կարևոր իրադարձություններ էին: Նա առանձնապես շեշտեց ինստիտուտի պատմության մեջ նրա առաջին տնօրեն, ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելու խաղացած դերը: Ա. Մելքոնյանն ընդհանուր գծերով անդրադարձավ ինստիտուտի 60-ամյա ձեռքբերումներին, նշեց ինստիտուտի կողմից հրատարակված հիմնարար մի քանի աշխատություններ, որոնց թվում առանձնացրեց «Հայ ժողովրդի պատմության» ուրվագծերը: Նա կարևորեց նաև ծրագրվող հայոց պատմության քառհատորյակի վրա տարվող աշխատանքները: Ա. Մելքոնյանը հատուկ ընդգծեց հայագիտության բնագավառում ինստիտուտի առավել աչքի ընկած մի խումբ աշխատակիցների ներդրումը: Նա շնորհակալական ջերմ խոսքեր հղեց ինստիտուտի բարերարներ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանին, ամերիկահայ Հարվի Նալբանդյանին և մոսկվաբնակ Ռադիկ Վանունցին իրենց կատարած բարեգործությունների համար, որոնց շնորհիվ նոր տեսք ստացավ ինստիտուտի գիտավարչական մասը, ստեղծվեցին համակարգչային բաժինը և նիստերի դահլիճը:

Այնուհետև Պատմության ինստիտուտի 60-ամյակի առթիվ ողջույնի խոսք ասաց ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Սարգսյանը: Նա բարձր գնահատեց հայ պատմագիտության ասպարեզում ինստիտուտի կատարած ներդրումը: Ակադեմիայի պրեզիդենտը ևս կարևորեց «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակը, ապա անդրադարձավ ծրագրվող հայերեն քառհատորյակի դերին ու նշանակությանը և խոստացավ նպաստել դրա ստեղծման աշխատանքներին:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Ա.Մելքոնյանն ինստիտուտի մի խումբ աշխատակիցների գիտական և աշխատանքային երկարամյա գործունեության համար շնորհակալագրեր հանձնեց:

ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս-քարտուղար Վ. Բարխուդարյանը ջերմորեն շնորհավորեց Պատմության ինստիտուտի 60-ամյակը: Նա մեծ նշանակություն տվեց Հ. Օրբելու, Հ. Մանանդյանի, Ա. Հովհաննիսյանի,

Ս. Երեմյանի, Մ. Ներսիսյանի, Լ. Խաչիկյանի, Վ. Պարսամյանի, Հ. Անասյանի, Վ. Հակոբյանի և այլոց կատարած աշխատանքներին: Վ. Բարխուդարյանի կարծիքով Պատմության ինստիտուտը եղել և մնում է հայագիտության ամենախոշոր կենտրոնը, ինստիտուտը տվել է ոչ միայն նշանավոր գիտնականներ, այլ նաև բուհական և պետական կյանքի տարբեր ոլորտների ակնառու գործիչներ: Վ. Բարխուդարյանն ինստիտուտի գործունեության մեջ ևս առանձնացրեց ընդհանրացնող մի քանի աշխատություններ՝ «Հայ ժողովրդի պատմության» եռահատոր դասագիրքը և բազմահատորյակը:

Ինստիտուտի աշխատակիցներին շնորհավորանքի ջերմ խոսքեր հղեցին Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը, ինստիտուտի աշխատակիցներ, պատմական գիտությունների դոկտորներ Վ. Ղազախեցյանն ու Է. Կոստանդյանը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 60-ամյա գործունեությունը հանգամանալից ներկայացրեց փոխտնօրեն Գ. Գրիգորյանը:

Այնուհետև ընթերցվեց ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նախկին տնօրեն, ակադեմիկոս Հ. Ավետիսյանի ողջույնի ուղերձը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հիմնադրման 60-ամյա հոբելյանի առթիվ ինստիտուտի տնօրինությանը և ողջ կոլեկտիվին իրենց ողջույնի խոսքն հղեցին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ն. Հովհաննիսյանը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Ա. Քալանթարյանը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Ա. Աղասյանը, Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Ա. Վիրաբյանը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության գլխավոր տնօրեն Վ. Հովակիմյանը, Երևանի պետական համալսարանի ռեկտորատի ուղերձն ընթերցեց համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան Բ. Հարությունյանը, Խ. Աբովյանի անվան Հայկական մանկավարժական համալսարանի ռեկտորատի ուղերձը ներկայացրեց հայոց պատմության ամբիոնի վարիչ Մ. Կարապետյանը, իսկ «Հայկական հանրագիտարան. հրատարակչության» կողմից՝ գլխավոր խմբագիր-տնօրեն Հովհ. Այվազյանը և Երևան քաղաքի պատմության թանգարանի տնօրեն Ա. Սարգսյանը:

Հանդիսության երկրորդ մասում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Լիդա Գևորգյանը և Ալբերտ Մկրտչյանը հատվածներ կարդացին Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմից: Կատարողական բարձր վարպետությամբ աչքի ընկան «Արմենիա» գուգուկահարների խումբը և «Շիրխանի» երգի ու պարի համույթը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հիմնադրման 60-ամյակին նվիրված հանդիսությունների շարքը շարունակվեց նաև հուլիսի 12-ին: Ինստիտուտի շուրջ 30 աշխատակիցներ այցելեցին միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անի:

Հաջորդ միջոցառումը տեղի ունեցավ հուլիսի 13-ին Շիրակի Սառնաղբյուր գյուղում, ուր անցկացվեց գիտաժողով՝ նվիրված Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Հանրապետության հիմանդրման 85-ամյակին: Գիտաժողովում զեկուցումներ կարդացին Ա. Մելքոնյանը, Վ. Մելիքյանը,

Հ. Մելիքյանը, Ռ. Գևորգյանը, Խ. Սարգսյանը: Ելույթներ ունեցան ակադեմիկոսներ Ս. Համբարձումյանը, Վ. Հակոբյանը, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի ռեկտոր Ա. Դարբինյանը:

Բացվեց Սառնաղբյուր գյուղի հերոսամարտին նվիրված հուշաքարը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հիմնադրման 60-ամյակին նվիրված միջոցառումներն եզրափակվեցին հուլիսի 14–15-ին երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների 28-րդ նստաշրջանով: Գիտաժողովին մասնակցում էին ինչպես Պատմության ինստիտուտի, այնպես էլ ԵՊՀ-ի, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, Հայաստանի ազգային արխիվի և այլ ԲՈՒՀ-երի ներկայացուցիչներ: Նստաշրջանում լսվեց հայոց պատմության տարբեր հիմնախնդիրներին նվիրված քսանմեկ ցեկուցում:

Հոբելյանական հանդիսությունները լայնորեն լուսաբանվեցին հանրալեռության լրատվության միջոցների կողմից: